ԱՐԶԻՎ ARDZIV

ՀՅԴ ԳԵՄ-Ի ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ • OFFICIAL ORGAN OF THE ARF YOC • ORGANE OFFICIEL DE LA FRA OJC

ՓԵՏՐՈՒԱՐ 1996 • FEBRUARY 1996 • Ը ՏԱՐԻ ԹԻՎ 6. VOL. 5 NO. 6 $3.00



Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.-ի ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ		A.R.F. Y.O.C. CHAPTERS	
ԼԵՒՈՆ ՇԱՆԹ	Մոնթրէալ	Montreal	LEVON SHANT
ՍԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆ	Թորոնթօ	Toronto	SIMON ZAVARIAN
ՊԵԿՈՐ ԱՇՈՏ	Լաւալ	Laval	PEGOR ASHOD
ԱՐԱՐԱՏ	Համիլթըն	Hamilton	ARARAD
ՅԱՌԱՋ	Սէնթ Քաթրինպ	Saint Catherines	HARATCH
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ	Քէմպրիճ	Cambridge	ARAM MANOUGIAN
ԱՐՇԱՒԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ	Վանքուվըր	Vancouver	ARHSAVIR SHIRAGIAN
ՔԵՌԻ	Ուինտզըր	Windsor	KERI

ARDZIV

Official organ of the A.R.F.Y.O.C.

Board of Editors

Meher Paboudjian
Sonia Parseghian
Sarine Der Kaloustian
Shant Jamgotchian
Jocelyn Hanachian
Verkine Khatchadourian
Nora Demerdjian
Kevork Kazezian

Ontario Correspondent

Shant Ghazarian

Administrator

Garine Hovsepian

Director of Marketing

Manuel Keusseyan

Office

3401 Olivar-Asselin,
Montreal, Quebec
H4J 1L5
Canada
Tel./Fax: (514) 331-6548

Publisher

ARDZIV Armenian Youth of Canada

Հ.Յ.Դ.Գ.Ե.Մ.-ի Ամառնային Ճամբար Արցախի մէջ

Պատրաստուեցէ՛ք 1996 Հայաստանագնացութեան...

Եղէ՛ք վարիչ՝ Արցախի ու Հայաստանի պատանիներու յատուկ Հ.Յ.Դ.Գ.Ե.Մ.-ի ամառնային ճամբարին...

Մանրամասնութիւններ յաջորդիւ

ARFYOC Summer Camp in Artsakh (Summer 1996)

Get ready to go to Armenia and be a counselor for juniors from Armenia and Artsakh.

Details will follow

Annual Subscription Rates: $15 for members and non-members, Single copy $3,
United States $15US,
Overseas $20US.
GST is included in all domestic subscriptions.
Printed in Canada: Copies mailed first class

ARDZIV

3401 Olivar-Asselin
Montreal, PQ, H4J 1L5
Tel./Fax: (514) 331-6548

«ԱՐԾԻՒ»ի մէջ տեղ գտած յօդուածները, կարտայայտեն զանոնք ստորագրողներուն կարծիքները միայն:
The views expressed in ARDZIV reflect solely the views of the authors themselves.

«ԱՐԾԻՒ» պարբերաթերթի խմբագրական կազմը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք օգնեցին այս թիւի հրատարակչական աշխատանքներուն:

ՓԵՏՐՈՒԱՐ 1996 / FEBRUARY 1996 Ը. ՏԱՐԻ ԹԻՒ 6. VOL. 5 NO. 6 $3.00

ԱՐԾԻՒ

ARDZIV

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
EDITORIAL

- Յեղափոխականութիւնը մտածելակերպ մըն է 3
- Revolution is a way of thinking 3

Յեղափոխութիւններ
Revolutions

- Յեղափոխութիւն 4
  Ռաֆֆի Տօնիկեան
- Revolution 5
  G.M.
- Revolutionary theory: Easton Model 5
- The theory based on the 1980 FLQ crisis in Montreal, Quebec 5
- American Revolution 6
  Jocelyne Hanashian
- French Revolution 6
  Armine Yaghedjian
- Ռուսական յեղափոխութիւնը 6
  Տիտո Թրքմէն
- The quiet revolution 7
  S.D.K.

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

- Հ.Յ.Դ. Կառոյց 8
  Շանթ ժամկոչեան

ՄԱՍՆԱՃԻՒՂԷ ՄԱՍՆԱՃԻՒՂ

- 10

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՄՏԱՃՈՒՄՆԵՐՈՎ

- Դաշնակցականին հաւատքը 9
  Սագօ Ղազարեան
- Unification: Myth and Reality 10
  Toros Dimitian
- Labelling through Language 11
  Nellie Ajamian
- I'll speak Armenian 11
  Շանթ Ղազարեան
- Թորոնթոյի համալսարանի ASA-ը 13
  Կ.Մ.

ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐ

- Monthly Chronology of Events in Armenia and Nagorno Karabakh 14

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

- Օսմանեան դրամատան դէպքը (14 Օգոստոս 1896) 16

ՊԱՏԱՆԵԿԱՆ

- Սփիւռքահայութիւն 17
  Մակի Մուրատեան

ՀՄԸՄ

- ՀՄԸՄ-ի Գանատայի շրջանի մարզական սեմինարներ 18
  Մոսիկ Թօփուզեան

ՄՇԱԿՈՅԹԱՅԻՆ
CULTURAL

- Secret life 13
  Danielle Jerajian
- Singapour et son heritage armenien 19
  Raffi Kalfayan
- Critic's Corner 21
  The Critic
- Top ten reasons for the ARF to start a revolution in Canada 21
  Haig Vanlian

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄԻ ԲԱԺԻՆ

..... 22

ԱՐԾԻՒ

Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

ARDZIV

OFFICIAL ORGAN OF A.R.F. ARMENIAN YOUTH ORGANIZATION OF CANADA
ORGANE OFFICIEL DE F.R.A. ORGANISATION DE LA JEUNESSE ARMENIENNE DU CANADA

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Սոնիա Բարսեղեան
Շանթ Ժամկոչեան
Վերգին Խաչատուրեան
Միհր Փապազեան
Ժոսլին Հանաշեան
Սարին Տէր Գալուստեան
Նորա Տէմիրճեան
Գէորգ Գազէզեան

Յեղափոխականութիւնը մտածելակերպ մըն է

Շատ հետաքրքրական երեւոյթ մըն է մեր գաղութին մօտեցումը Հ.Յ.Դաշնակցութեան հանդէպ: Տարբեր մարդիկ զանազան տեսանկիւններէ կը դիտեն ՀՅԴ-ն եւ անոր գործելակերպը, կառոյցը, գաղափարախօսութիւնը եւ մանաւանդ անոր ոգեղէն ոյժը՝, յեղափոխականութիւնը: Ըլլանք դաշնակցական թէ հակադաշնակցական, անտարակոյս պէտք է ընդունինք որ ՀՅԴ-ն յեղափոխական կազմակերպութիւն մըն է: Անոր գոյութիւնը պայմանաւորուած է իր յեղափոխական ըլլալով:

Սակայն կարեւոր է սահմանել թէ մեզի համար ի՞նչ է յեղափոխութիւնը: Յաճախ, երբ մարդիկ կը լսեն յեղափոխութիւն բառը, կը պատկերացնեն՝ զէնք, կռիւ, արիւն, վայրագութիւն եւ մահ: Դժբախտաբար, ոմանք վերոյիշեալ հասկացողութիւնը ունին նաեւ մեր կուսակցութեան յեղափոխական դիմագիծին հանդէպ:

Դաշնակցութեան համար յեղափոխութիւնը ոչ միայն ֆետայական շարժում կամ արշաւանք կազմակերպել է, այլ՝ գաղափարաբանութիւն մը որու հետ կ'ապրինք ամէն օր, ամէն վայրկեան: Մեզի համար յեղափոխութիւնը յառաջդիմելու միջոց մըն է: Հայաստանի խորհրդայնացումէն ետք մօտաւորապէս 50-60 տարի Դաշնակցութիւնը ո՛չ ֆետայական խումբեր ղրկեց Հայաստան, ո՛չ ալ ապստամբութիւններ կազմակերպեց: Չկար կռիւ, չկար զէնք, չկար մահ, սակայն Դաշնակցութիւնը մնաց դաշնակցական՝ պահելով իր յեղափոխական ոգին:

Յեղափոխական գործի կրնան ծառայել բանուորը՝ իր բանուորութեամբ, գիտնականը՝ իր գիտութեամբ, իսկ ֆետային՝ իր զէնքով: Յեղափոխական ոգին է որ 1890ական թուականին, օսմանեան հայուն ձեռքը տուաւ զէնք ու 1990ական թիւերուն երիտասարտութեան կու տայ ոյժ՝ պայքարելու Ղարաբաղի ու Հայաստանի ամրացման համար: Այդ նոյն մտածելակերպը կու տայ քննադատական աչք՝ ըմբոստանալու Հայաստանի մէջ տեղի ունեցող մարդկային իրաւանց ու ժողովրդավարական խախտումներու դէմ: Յեղափոխական ըլլալը մտածելակերպ մըն է:❑

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
EDITORIAL

REVOLUTION IS A WAY OF THINKING

It is very interesting to see how our community views the ARF. Various people have different opinions about the ARF's structure, its ideology and especially its most valuable strong point, its revolutionary spirit. Dashnak or not, with no doubt, we should accept that the ARF is, above all, a revolutionary organization. Its existence is conditioned by its revolutionary essence.

It is important here to present our understanding of revolution. Generally, when someone hears the word revolution, the first things that come to mind are guns, conflicts, bloodshed, violence and death. Unfortunately, many organization's share this opinion when it comes to our revolutionary aspect.

For the ARF, revolution is an ideology remaining from our ancestors, that lives with us continuously and not only when movements and uprisings are organized. For us, revolution is a way to progress and evolve. After the Sovietization of Armenia, for more than fifty years, the A.R.F. did not send fighting troops there, nor did it initiate any uprisings. There were no fights, no guns, and no deaths, yet the Dashnak remained Dashnak, maintaining its revolutionary quality.

Revolutionary spirit is what armed the Armenians of the Ottoman Empire in the 1890s; it is what pushes the youth of the 90s to fight for the strengthening of Karabakh and Armenia. Revolutionary spirit gives to the youth the critical eye to make them take action against human rights violations and anti-democratic measures in Armenia today. Revolution is a way of thinking.❑

Յեղափոխութիւն

Հայոց պատմութեան էջերուն ընդմէջէն

Ռաֆֆի Տօնիկեան

Հայոց պատմութեան էջերը թղթատելով, կը տեսնէք թէ հայ ժողովուրդը մղած է բազմաթիւ պատերազմներ զանազան ազգերու կամ ցեղերու դէմ: Մեր ժողովուրդը ճակատամարտի մէջ կը մտնէր մեծ մասամբ ինքնապաշտպանութեան համար եւ ոչ՝ խլելու կամ կողոպտելու իր թշնամին:

Սակայն այս բոլոր պատերազմները յեղափոխական դէպքեր չենք կրնար համարել եւ այս պատերազմներու ընթացքին զոհուածները չենք կրնար նաեւ յեղափոխականներ անուանել: Անկասկած որ նահատակներ էին, բայց անոնց նպատակն էր պաշտպանել իրենց կալուածները եւ հարազատները եւ ոչ թէ շարժում ստեղծել տապալելու համար երկրի իշխանութիւնները:

Ուրեմն, յեղափոխութիւն տեղի կ'ունենայ մասնայատուկ ժամանակ մը, իբր արդիւնք զանազան դէպքերու եւ յատուկ պարագաներու:

Անկասկած, հայոց յեղափոխութեան շրջանը 19-րդ դարու աւարտն է եւ ներկայ դարու սկիզբը: Սակայն, հայոց պատմութիւնը տեսած է յեղափոխականներ եւ յեղափոխութիւն վերոյիշեալ ժամանակաշրջանէն առաջ ալ:

3-րդ դարու աւարտին, չորրորդ դարու սկզբնական շրջանին, Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնէական շարժում մը ստեղծեց Հայաստանէն ներս: Արդիւնք՝ Լուսաւորիչ 13 տարի բանտարկուեցաւ Խոր Վիրապ, հրաշքով ազատեցաւ եւ հայոց թագաւորին համաձայնութեամբ եւ երաշխաւորութեամբ հիմնեց հայոց առաջին եկեղեցին եւ հայերը դարձան առաջին ազգը, որ ընդունեց քրիստոնէութիւնը իբր պետական կրօնք (301թ.):

Անկէ ետք, մինչեւ 18-րդ դարու առաջին կէսը, Հայաստան յեղափոխութիւն չտեսաւ, որը հասկնալի է, տրուած ըլլալով որ վարչածեւը միապետութիւն մըն էր:

Անիի անկումէն ետք, Բագրատունիները կորսնցուցին իրենց թագաւորութիւնը: Շուրջ 900 տարի, Հայաստան ոչ անկախութիւն ունեցաւ եւ ոչ ազատութիւն: Մեր երկիրը դարձած էր կռուախնձոր զանազան ցեղերու միջեւ:

18-րդ դարու առաջին կիսուն, Դաւիթ Բէկ, հայ զօրավար մը, որ կը ծառայէր Վրաստանի բանակէն ներս, շահեցաւ մեծ յաղթանակներ պարսիկներուն եւ թուրքերուն դէմ, ի մտի ունենալով հիմնել ազատ եւ անկախ Հայաստան մը, բայց դժբախտաբար, իր ջանքերը ի զուր անցան:

Հայոց պատմութեան ամենազօրաւոր յեղափոխական շարժումը եկաւ Օսմանեան կայսրութեան շրջանին: Այս շարժումը կը բացատրուի շատ մը դէպքերու պատճառաւ:

Հայ ժողովուրդը կ'ապրէր անտանելի վիճակի մէջ: Պարտադրուած էր բարձր տուրքեր վճարելու եւ երկրին մէջ անապահովութեան զգացում կը տիրէր: Հայերը իրաւազուրկ էին ամէն գետնի վրայ: Հայ քաղաքացիին համար արգիլուած էր զէնք կրել, երբ թուրքը իրաւունք ունէր ամէն տեսակի զէնք կրելու կամ պահելու, ու նոյնիսկ զայն կը գործածէր հայուն դէմ: Հայը պէտք էր նոյնիսկ գլուխ ծռէր, երբ թուրքի մը առջեւէն անցնէր: Այս օրէնքները խախտողները մահուան կ'ենթարկուէին:

Գաւառացի հայերը ընդոստացան այս վիճակին դէմ եւ դիմեցին ինքնապաշտպանութեան ու ինքնաբերաբար մերժեցին Օսմանեան կայսրութեան արիւնաքամ գերիշխանութիւնը: Անկէ ետք եկան կուսակցութիւնները (որոնց հիմնադրութեան մասին կրնաք կարդալ «Արծիւ»ի վերջին թիւին մէջ) կազմակերպելով ցոյցեր, հրատարակելով թերթեր եւ աշխարհին իմացնելով, թէ ինչ տեսակի անիրաւութիւններ տեղի կ'ունենային Հայաստանէն ներս: Այս կուսակցութիւններու հիմնադիրները ունէին եւրոպական կրթութիւն եւ խորապէս տպաւորուած էին ֆրանսական յեղափոխութենէն, որ տեղի ունեցած էր մէկ դար առաջ: Այս շրջանին, աշխարհի չորս ծագերէն կը լսուէին մարդոց հաւասարութիւնը եւ մարդկային իրաւունքներու ⇨9 պաշտպանութեան

Revolution

revolu'tion (-loo-) n. **1.** Revolving, motion in orbit or circular course or round axis or centre, cyclic recurrence; **2.** Complete change, turning upside down, great reversal of conditions;

The power of the word "revolution" lies in its many possible interpretations.

It is interesting to take a look at how "revolution" should be interpreted both in the Republic of Armenia and the Diaspora.

In Armenia, given the circumstances, what about dropping the "r"? There should be no question about discarding the option of a revolution, given the volatile situation on the frontiers of the Republic and Artsakh. Although a suddden change of the ruling regime could be desirable by some, a revolution would have disastrous consequences for the whole Armenian nation. Instead, the emphasis should be made on promoting the democratic development of the political system in Armenia. This requires an **evolution** of the Armenian society towards a more righteous, unbiased one, and all forces involved in shaping the future of our nation, including the Diaspora, should strive to bring about such a metamorphosis.

In order to help this evolution happen, the Armenian Diaspora needs a revolution itself: a revolution of the mind. In the light of the independence of the tiny Armenian Republic, we need to replace our idealistic approach to the idea of an independent Armenia with a more realistic one. This does not mean at all that we should relinquish our rights and demands. It means that we should accept the existence of a newly independent former Soviet Republic inheriting all the flaws of the Soviet Union, and realize that a transition to an ideal Armenian Republic cannot happen overnight.

The human mind is bound to change, as are societies. Youth, by nature, are inclined to trigger change. In other words, they are "revolutionaries".❑

G.M.



Revolution...

Revolutionary theory: Easton Model

The concentric circle theory of revolution

1.Build a power-base
2.Engage in political socialization (spread of ideology & philisophy)
3.Networking & recruitment
4.Interest articulation
5.Interest aggregation
6.Revolution modality



The theory based on the 1980 FLQ crisis in Montréal, Québec



The American Revolution

The American Revolution was an eighteenth century struggle by thirteen American colonies to gain independence from Great Britain, culminating in victory through the War of Independence 1775-1783 and in the formation of the United States of America.

Britain's vastly expanded empire of North America after the last French and Indian war resulted in the need for increased revenues and larger troop requirements in the New World. A series of British ministers supported by Georgia, felt justified in trying to make the colonies share these burdens and chose to disregard the political and economic maturity that had developed over 150 years of American history by instituting more direct control from London. Though political and economic power remained largely in the same hands after the war as before, new written constitutions in the various States guaranteed civil rights and separation of Church and State.❑

Compiled by
Jocelyne Hanashian
Pegor Ashod Chapter
Source: Encyclopedia Britannica

French Revolution

The French Revolution was a European political upheaval that began in France in 1789 and continued until 1815; based on liberal, democratic and nationalist principles, it is considered the first of modern revolutions.

In France, the first steps of the Revolution were the abolition of aristocratic and clerical privileges that had characterized the old order, and the establishment of a constitutional government that limited the power of the monarch. After the Proclamation of the Republic (September 1792), the Revolution, although basically a movement controlled by the bourgeoisie and embodying its aspirations, went so far as to pass a social program that distributed land to the poor. The principles of the Revolution, however, were never fully realized in France, for the rule of the revolutionary government was marked by terror and bloodshed, and was replaced by the domination of Napoleon (1799).

Through a series of wars, French rule was extended throughout most of Europe and with it, France spread its liberal ideas, including those of popular sovereignty and civil equality. After Napoleon's final defeat in 1815, supporters of these ideas continued to oppose the restored conservative regimes throughout the 19th century.❑

Compiled by Arminé Yaghedjian
Levon Shant Chapter
Source: Encyclopedia Britannica

Ռուսական յեղափոխութիւնը

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ. այս բառը ազգերու պատմութեան ընթացքին միշտ ունեցած է իր տեղը եւ ազդեցութիւնը եւ շատ մը փոփոխութիւններու պատճառ եղած է. պատմութեան ընթացքին ազգերը ունեցած են իրենց յեղափոխութիւնները, բայց կը յիշուին երեք մեծ յեղափոխութիւններ՝ ֆրանսական, ամերիկեան եւ վերջինը, ռուսական յեղափոխութիւնը, որ ծնունդն էր Բոլշեւիզմի եւ կոմունիստական շարժումին. այն շարժումը, որուն հիմքերը դրաւ Գարլ Մարքս եւ շարունակեց Լենին, յաջողեցնելով այդ յեղափոխութիւնը:

1917-ի յեղափոխութենէն առաջ, Ռուսիա կայսրութիւն էր. ցարը կ'իշխէր. ինք եւ իր պալատականները ամէն տեսակի իրաւունքներ ունէին, իսկ ժողովուրդը շատ աղքատ, ստրուկ եւ ճնշուած վիճակի մէջ կ'ապրէր: 20-դարու սկիզբը, արդէն Մարքսի մտածումները եւ գաղափարները երիտասարդութեան մտքերուն վրայ մեծ ազդեցութիւն ունեցան, մանաւանդ արեւելեան Եւրոպայի երկիրներուն մէջ: Այդ գաղափարներէն էին՝ արդարութիւն, հաւասարութիւն օրէնքի եւ կանոնի առջեւ, ինչպէս նաեւ որեւէ ընկերային կարգի խտրութեան չգոյութիւն. այս գաղափարներով է որ ծագեցաւ ռուսական յեղափոխութիւնը: Առաջին քայլերը դրաւ Լենին եւ կարողացաւ շատ արագ ձեւով սիրաշահիլ այդ ստրուկ ժողովուրդը, եւ անոնց բացատրեց այդ գաղափարները: 1917-ի սկիզբները արդէն սկսած էին շարժումները Ռուսիոյ բոլոր քաղաքներուն մէջ: Գաղտնի ձեւերով նոյնիսկ բանակը, որ կը պատերազմէր Թուրքիոյ դէմ, բաժնուեցաւ երկուքի:



1917-ի նոյեմբերին, Լենինի առաջնորդութեամբ, յեղափոխականները յաղթեցին եւ կարմիր բանակը տապալեց կայսրը, պատժելով կայսրը եւ ընտանիքը գնդակահարութեամբ: Այսպիսով ընթացք առաւ 20-րդ դարու մեծ յեղափոխութիւնը:❑

Տիտօ Թրքմէն
Բեկոր Աշոտ Մասնաճիւղ

THE QUIET REVOLUTION

It was a journalist for the Toronto *Globe and Mail* who first used the expression the Quiet Revolution to describe the changes undertaken in Quebec from 1960 onward. The expression was quickly taken up in French by Quebec's political leaders and intellectuals as "la Révolution tranquille" and had heavy symbolic connotations.

In the strict sense, the Quiet Revolution generally refers to the political, institutional and social reforms undertaken between 1960 and 1966 by the Liberal government of Premier Jean Lesage.

Between 1960 and 1966, a series of reforms were rapidly put into effect, radically changing Quebec's institutions, image and self-concept. The key idea was "rattrapage" (catching up). This meant an acceleration of the process of modernizing Quebec society and bringing it up to date. One implication of this process was that the state had to take responsibility for institutions that had been dominated by the private sector- notably the Catholic Church- so that they could be rationalized and access to them could be made more democratic. In three sectors in particular, structures and programs were reorganized from top to buttom: education, health and social affairs.

If the Quiet Revolution bore the stamp of reform liberalism, it also owed much to the new Quebec nationalism. The nationalization of Quebec's private electricity companies in 1962 became a symbol of this aspect of the Quiet Revolution. The new nationalism was expressed on three fronts at the same time. Within Quebec, nationalists challenged the ascendancy of the British minority and promoted the accession of members of the French majority to the leading positions in the economy and society. In Canada, they sought to end the process of federal centralization and obtain wider powers for Quebec within Confederation. Finally, they aimed to assert Quebec's presence internationnally, notably by establishing a special relationship with France and other Francophone countries.

The 1960s was also the decade of youth. Quebec started to build new secondary schools and later cegeps and universities for its young people. As in other societies in different parts of the world, youth in Quebec made their presence felt. They organized their own student uprising in the fall of 1968. Quebec youth discovered marijuana, the counterculture and sexual liberation and made a new kind of music their own. Their large numbers also provided strong support for the new nationalism and especially for the Parti Québecois, founded in 1968.

The nationalism was a rising force, both politically and symbolically. Expressed in the songs of Quebec's artists and in the formulations of its intellectuals and a new generation of politicians, it reached all sectors of the population with its message of building a stronger Quebec.❑

Compiled by S.D.K.

[EXCERPTS TAKEN FROM LINTEAU, DUROCHER, ROBERT, RICARD, *QUEBEC SINCE 1930*, TORONTO, JAMES LORIMER & COMPANY, PUBLISHERS, 1991, 632P.]

Հ.Յ.Դ. ԿԱՌՈՅՑ

Ծնունդէն մինչեւ օրս, Հ.Յ.Դ.-ը, իր քաղաքական ծրագրային առաջադրանքները իրագործելու նպատակով, նկատի առնելով տիրող աշխարհաքաղաքական պայմանները, կազմակերպական կառոյցը օրուայ տիրող պայմաններուն յարմարցնելու իւրայատուկ ճկունութեամբ մը, կարողացած է պահել իր գործունեայ ընթացքը:

Ըլլալով գործի կուսակցութիւն մը, իր առաջին ընդհանուր ժողովով Հ.Յ.Դ-ը կ'որդեգրէր կառուցայինապակեդրոնացեալ դրութիւնը, սկիզբի երկու տարիներուն կիրարկուած կեդրոնացեալ դրութեան փոխարէն, որովհետեւ այդ պատճառ կ'ըլլար շատ մը գործունէութիւններու որոշումներուն ուշացման: Մինչեւ օրս ալ կուսակցութիւնը այս դրութիւնը կը պահէ հակառակ կարգ մը փոփոխութիւններու:

Նախքան կառոյցի զարգացումներու մանրամասնութիւններուն անցնիլս, պիտի փորձեմ բացատրութիւն մը տալ մարմիններու եւ անոնց փոխյարաբերութիւններուն մասին:

Կուսակցութեան գերագոյն մարմինն է Բիւրօն որ կ'ընտրուի կուսակցութեան ընդհանուր ժողովին կողմէ: Այս ժողովին համարատու է ան:

Բիւրոյի պարտականութիւնն է իրագործել կուսակցութեան գերագոյն ժողովի որոշումները, հսկելով շրջաններու մարմիններու գործունէութեան վրայ: Ան կը վարէ կուսակցութեան արտաքին քաղաքականութիւնը, բացառաբար հայրենիքէն ներս ուր գոյութիւն ունի երկրի գերագոյն մարմինը:

Շրջաններու գերագոյն մարմիններն են կեդրոնական կոմիտէները, որոնք կ'ընտրուին շրջանին ներկայացուցչական (պատգամաւորական) ժողովին կողմէ: Առաջնորդուելով կուսակցութեան ընդհանուր եւ վերոյիշեալ ժողովին որոշումներով՝ մարմինը կը հսկէ կոմիտէութիւններու գործունէութիւններուն վրայ եւ միաժամանակ շրջանին տեղական քաղաքականութիւնը կը վարէ:

Մեկուսի կոմիտէութիւնները կը կազմուին առանձնացած շրջաններու մէջ: Ունին կեդրոնական կոմիտէութիւններու իրաւասութիւնները, եւ կ'ընտրուին շրջանի գերագոյն ժողովին կողմէ:

Առանձնակի շրջանները այն շրջաններն են, ուր ընկերներուն թիւը բաւարար չէ մեկուսի կոմիտէութիւն կազմելու: Այս մարմինները ուղղակի Բիւրոյին կապուած կ'ըլլան:

Հ.Յ.Դ. ուսանողական միութիւն կազմելու իրաւասութիւն ունին այն դաշնակցական ուսանողները՝ որոնք համալսարանական կամ համարժէք բարձրագոյն ուսման կը հետեւին: Այս միութիւնները, շրջանին մէջ առանձին կուսակցական միաւորներու իրաւասութիւնները ունին:

Կոմիտէութիւնները, ըստ շրջաններու ներքին բաժանումներուն, կը ստանձնեն իրենց պարտականութիւնները, ու կը վարեն տեղւոյն կուսակցական եւ ազգային բոլոր գործերը, առաջնորդուելով կուսակցութեան ուղեգիծով եւ կ.կոմիտէութեան ու կոմիտէութեան տարեկան ընդհանուր ժողովներու որոշումներով:

Խումբերը կը կազմուին կոմիտէութիւններու շրջաններէն ներս, ըստ թաղային աշխարհագրական բաժանումներուն, ուր ընկերները իրենց սովորական օրակարգներէն դուրս կը զբաղին իրենց ժողովի ներկայացուած տեղական թէ այլ հարցերով, ինչպէս նաեւ որոշումներ կը փոխանցեն գերադաս մարմնին, պէտք եղած հաւանութիւնը ստանալու համար:

Իսկ հայրենիքի պարագային, ընդհանուր պատասխանատուութիւնը կ'իյնայ կուսակցութեան հայրենիքի գերագոյն մարմնի վրայ: Այս մարմինը կ'ընտրուի երկրի գերագոյն ժողովին կողմէ որուն կը մասնակցին հայրենիքի մէջ գործող կեդրոնական կոմիտէութիւնները, խորհրդարանի ֆրակցիան եւ Բիւրոյի ներկայացուցիչները: Նոյն ժողովն է որ, առաջնորդուելով ընդհանուր ժողովի որոշումներով, կը ճշդէ կուսակցութեան հայրենիքի քաղաքականութիւնը:

⇨12

Երիտասարդները իրենց մտածումներով

Դաշնակցականին հաւատքը

Դաշնակցութիւնը կոչում մըն է:

Հայ յեղափոխական դաշնակցութիւնը կազմակերպուելէ ետք Թրքահայաստանի եւ Կովկասի մէջ, գործիչներ դրկեց ամէն կողմ եւ կազմեց հայդուկային խումբեր, որոնք տարիներ շարունակ, մինչեւ Հայաստանի անկախութեան հռչակումը, կռուեցան թրքական բռնապետութեան դէմ, հայ ժողովուրդի իրաւունքներուն պաշտպանութեան համար:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դրօշին տակ համախմբուեցան հազարաւոր հայեր, միշտ հաւատալով ՄԷԿ ԱԶԳ, ՄԷԿ ՀԱՅՐԵՆԻՔ իտէալին:

Դաշնակցական երիտասարդը կը հաւատայ մէկ ազգ, մէկ հայրենիք իտէալին, ըլլայ ան մեր հողին վրայ, Ղարաբաղի մէջ, թէ՝ Սփիւռք: Այս հաւատքէն մեկնելով, ան եղած է ներկայ բոլոր յեղափոխական գործերուն մէջ, ինչպէս որ հարկ է:

Իսկ տարագրութեան ընթացքին, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, պանդուխտի ցուպը ձեռքին, անցաւ կազմակերպչական աշխատանքի, այս անգամ Սփիւռքի մէջ կազմելով ու կազմակերպելով Հայ սփիւռքը, տէր կանգնելով սփիւռքահայութեան. ստեղծեց գաղթօճախներ Լիբանանի, Ֆրանսայի, Սուրիոյ, Եգիպտոսի, Երուսաղէմի մէջ եւ այլուր...

Սկսաւ Մեծ Եղեռնի ճիւաղները պատժել, ըլլայ Թալէաթը կամ Ճեմալ Ազմին եւ մեծ թիւով Օսմանեան կայսրութեան չար պատուհասները: Սկսան շինարարական աշխատանքները, շինուեցան կեդրոններ: Հայութիւնը հաւաքուեցաւ այդ կեդրոններուն շուրջ, փոխանցելով հայեցի կրթութիւն:

Իսկ երէկ ան ներկայ էր Մայր Հայրենիքի օգնութեան համար, ահաւոր երկրաշարժի ընթացքին, ինչպէս ներկայ էր Հայաստանի Երկրորդ Հանրապետութեան ստեղծման ու կազմակերպման աշխատանքներուն:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ներկայ էր Արցախի ազատագրական պատերազմի ընթացքին, տէր կը կանգնի ու կը պայքարի անոր Հանրապետութեան յարատեւութեան համար, եւ միշտ պատրաստ է թափելու իր արիւնը ի սէր Հայրենիքին, հաւատալով ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ եւ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ իտէալին:❑

ՍԱԳՕ ՂԱԶԱՐԵԱՆ
18 դեկտ. 1995, Թորոնթօ

⇦4

անհրաժեշտութիւնը: Հայ գրականութիւնը եւ նոյնիսկ նշանաւոր հայ կղերականներ յեղափոխութիւն կը կանչէին:

»Ժողովուրդ հայոց, անշուշտ լաւ հասկցաք թէ զէնքը ի՛նչ կրնար գործել եւ կը գործէ, ուրեմն սիրելի եւ օրհնեալ հայաստանցիներ՛ն, գաւառացիներ՛ն, երբ հայրենիք վերադառնալու լինիք, ձեր բարեկամաց եւ ազգականաց իբր պարգեւ՝ մէկ զէնք տարէք, զէ՛նք առէք եւ դարձեալ զէնք: Ժողովո՛ւրդ, ամենէն առաջ քո ազատութեան յոյսը քո վրայ դիր, քո խելքին եւ բազուկին ո՛յժ տուր, մարդ ինքնիրմէն պէտք է աշխատի որ փրկուի«:

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ-ՀԱՅՐԻԿ 1887

(Պոլսոյ մայր եկեղեցւոյ մէջ 61-րդ յոդուածին մասին խօսած նշանաւոր քարոզը, Պերլինեն դարձին):

Մեր մեռելները բոլոր
Միահամուռ ոստումով
Պիտի կանգնին գերեզմանին մէջ իրենց,
Ու անհամբեր հեռո՛ւն, հեռո՛ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին
Արշալոյսի, Արշալոյսի՛ մը՝ որուն
(Հաւատացէ՛ք ինձ, մայրե՛ր)
Ես ոտնաձայնը կ՚առնեմ:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ
(1884-1915)

Թէեւ յեղափոխութիւնը տուաւ շատ մը զոհեր, բայց մեզի սորվեցուց զէնք վերցնել եւ մինչեւ ի մահ պաշտպանել մեր իրաւունքները, զոհուիլ ազատութեան բագինին. գաղափարներ, որոնք մոռցուած էին Օսմանեան բռնակալութեան դարերուն: Այս յեղափոխութիւնը ծնաւ կուսակցութիւններ եւ դէմքեր, որոնց մինչեւ այսօր, 106 տարի ետք, մենք դեռ կը յիշենք եւ նոյնիսկ պատրաստ ենք զոհուելու իրենց բերած գաղափարներուն իրականացման համար: Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի կանչը կը լսուի մինչեւ այսօր: Եւ հաստատ կամքով է, որ կ՚ըսեմ թէ հայոց յեղափոխութիւնը կը շարունակուի մեզմով եւ եկող սերունդներով:

Թերեւս, երբ Արարատի գագաթին կը բարձրանայ Եռագոյնը եւ արծիւը իր բոյնը կը կազմէ ազատ ղարաբաղեան բարձունքի վրայ եւ հայաստանցին կը դառնայ ազատ ու անկախ, այն ատեն կրնանք պատմութեան մէջ գրել, թէ հայոց յեղափոխութիւնը իր վերջակէտը կ՚արձանագրէ:❑

ՐԱՖՖԻ ՏՕՆԻԿԵԱՆ
Լեւոն Շանթ մասնաճիւղ

Երիտասարդները իրենց մտածումներով

UNIFICATION: MYTH AND REALITY

Many members of the Canadian-Armenian community have heard, listened, talked about and fought in regards to this divisive issue. I would like to take this opportunity to dispel some misconceptions which seem to be clouding the focus of the real picture.

Myth: We need to be more unified like the Greeks, Italians, and Jews.

Reality: These communities are in no way more united than we are. As someone who went to high school with an overwhelming Greek majority, worked with Italians while in university, and taught in a private Jewish high school, I humbly submit the following. The Greek community is separate on a much grander scale due to the unique way each group is formed. The community is split along village heritage links known as "sighollos". In other words, the village where your father or grandfather comes from is directly correspondant to the community organization you join. Needless to say this means the Greek community is as splintered as you can get. The Italians are not in any way different, as their affiliation is also strongly based on geographic considerations. If you doubt this, try to bring together an Italian-Canadian with ties to the north of Italy with someone who is bonded to the Southern region of the country. The ensuing argument may be hazardous to your health. The Jewish community is held up as a model whenever the issue of unity is brought to the forefront. Once again, nothing can be further from the truth. The Jewish community is divided along class distinctions, heritage, secular and religious grounds.

Myth: We need an executive body like the Canadian Hellenic Congress or the Canadian Jewish Congress to speak on behalf of all Canadian Armenians.

Reality: We have no need for such a body because it already exists. The Armenian National Federation (ANF) represents over 30 Canadian-Armenian organizations and is the community's official representative in the Canadian Ethnocultural Council (CEC). The CEC is recognized by the government of Canada as the organization that represents over 7 million Canadians who form part of our country's multicultural community. In order to become a member of the CEC an organization must meet strict criteria, including being national in scope and representing the majority of a given ethnic community. The ANF is a member of this organization along with the Canadian Hellenic Congress, the Canadian Jewish Congress and the Canadian Italian Congress.

Myth: Armenians need to be more unified.

Reality: We have proven to be extremely well unified when the need has arisen. Recent examples of this unity are the earthquake of December 1988 and the war over Artsakh. After the earthquake, thousands upon thousands of Canadian-Armenians worked together feverishly in order to help our brethren in Armenia. Money, food and clothing were gathered and through our collective effort was expedited to those who required the most aid. The unity for our fighters in Artsakh as they have struggled for their survival against the Azeris is also notable. Armenians of different political colours have come together over this cause. If the issue is worth uniting over, our people have united. If the issue is not worth uniting over, we have proven that we will not unite. I say long live the diversity. Without diversity of opinions, beliefs and thoughts our existence as a race will become the new reality we will be discussing.❑

Toros Dimitian
Montreal

Մասնաճիւղէ Մասնաճիւղ

Սիմոն Զաւարեան, Թորոնթօ

Դեկտեմբեր 8, 1995
Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ. «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղի անդամները իրենց մասնակցութիւնը բերին երիտասարդականի եւ պատանեկանի միութեան կազմակերպած տարեկան ընկերային խրախճանքին։ 50-է աւելի պատանիներ ու երիտասարդներ հայկական հաճելի ու ընկերային մթնոլորտի մէջ երգեցին ու առիթը ստեղծ ուեցաւ ընկերային կապեր հաստատելու պատանեկանի ու երիտասարդականի ընկերներու միջեւ։

Դեկտեմբեր 18, 1995
Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ. «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղի անդամական յանձնախումբը գեղեցիկ գաղափար մը յղացած էր, 1995 տարուայ վերջին ժողովէն ետք միասնաբար ընկերային ուրախ մթնոլորտ մը ստեղծելու, ընկերներու համեղ եւ հիւրասէր գործունէութեամբ համադամ անուշեղեններով հիւրասիրուեցան ընկերները։ Ուրախ մթնոլորտով մեկնեցան ակումբէն վերստին տեսնուելու յաջորդ տարին։ Մասնակցող ընկերներու թիւն էր 40-ի շուրջ։

Դեկտեմբեր 25, 1995
Աւանդութիւն դարձած մասնաճիւղի տարեկան պարանցիկը։ 500-է աւելի ներկաներ լեցուած էին ակումբի սրահէն ներս։ Գնահատելի էր խստապահանջութիւնը ու ընկերային շրջանակը զուտ հայկական էր, օտարներու մուտքը ⇨13

Երիտասարդները իրենց մտածումներով

Labelling through Language

Whether or not to be a "good" Armenian requires that one should speak his mother tongue has become a most controversial issue amongst our community. There are basically two opinions concerning this issue. The non-Armenian-speaking public believes that languages should not determine a person's patriotism. Opposing this belief, the Armenian-speaking group insists that language is the most important factor that determines an individual's patriotism. Whether or not a person speaks his mother tongue is a personal choice that every individual should make on his own. But no one should forget the importance of the Armenian language

As Khatchadour Apovian has written, "Language is what keeps a nation together and guarantees the survival of its people." If we do not learn to speak our mother tongue, we will lose an important part of our individuality. By doing so, we will become yet another fading minority in the world. Ironically, we do not have a distinctive characteristic, such as oriental eyes or a unique religion, to separate us from other Christians. Our Armenian heritage, including our language, is the only distinctive trait that secures our existence.

The Armenian language also has an important part in our history. We should not forget all the battles, wars and massacres our ancestors experienced during Persian and Turkish oppressions. Our forefathers struggled very hard to create, preserve and pass on to us a rich culture that we, the new generation, should be proud of. We must not forget our precious heritage that was started by Haig and has survived through many centuries. It is our duty to maintain and to help flourish the legacy we have inherited, in order to secure its survival for yet many more centuries.

Moreover, the knowledge of Armenian literature should be a part of every Armenian's education. Unfortunately, all the Armenian literary works are exclusively written in Armenian. Translations cannot be considered equivalents of the original works. A non-Armenian speaking individual will be unaware of the wonderful works of Varoujan, Raffi, and their contemporaries. Furthermore, Armenian literature's future progress will come to a halt, because most of the capable minds of the future will write in English instead of Armenian.

Considering these and many other reasons, the new generations should make an effort to learn Armenian. At the same time, the Armenian speaking public should not condemn the new generations for their ignorance of Armenian. Instead, they should encourage them to learn this rich language. Above all, some Armenian speaking people must stop considering themselves "better" Armenians because they speak Armenian. Language is important, but it should not be used to label people as "good" or "bad" Armenians.❑

NELLIE AJAMIAN

"I'll speak Armenian"

I promise next time we meet I'll speak Armenian.

Նորածանօթ ընկերներու բաժանումի վերջին պահուն արտասանուած խօսքերը եկան հոգելլկուած մտածումներս ցնցելու: Ճէյսօնի արտասանած խօսքերը բալասանի ազդեցութիւն ունեցան. Սփիւռք խաժամուժին մէջ տարտղնուած հոգեակներ իրենց հոգեվարքով չէին պսակուէր՝ տակաւին հայկականութիւն կը սողոսկէր սփիւռքապիղծ հոգիներէ ներս: Հաւանաբար անգլիախօս Ճէյսօնի արտասանած խօսքերը, խոր ցաւի մը արդիւնքը ըլլային, եւ կամ ինքնագիտակցութեան ցնցում՝ հաւանաբար մեր տասնօրեայ ծանօթացումին վիճաբանութեան արդիւնք, յստակ չէ, բայց քաջալերելի է Ճէյսօնի ինքնասրբագրութեան առաջարկը:

Ճէյսօն եւ իր նմանները, որոնք գործօն դերակատարներ են մեր իրականութեան (սփիւռքահայ իրականութիւն) շատ անգամ զոհ կը դառնան քննադատութիւններու, բայց ո՞վ մեղադրել, Ճէյսո՞նը, իր ընտանի՞քը, շրջանա՞կը, ակո՞ւմբը, եկեղեցի՞ն. արդեո՞ք մեղադրել: Օրըստօրէ աճող թնճուկի մը ահազանգը չէ որ կը հնչեցնենք. հայ իրականութեան մաս կազմող օտարամոլութեան ախտին, որ կու գայ շատ հինէն, հաւանաբար գաղիերէն խօսողներու մեծայարգ ու մեծապատիւ ժառանգորդներ վերլուծումը կը հոլովենք. ո՞ր-չափով անոնք կը կորսնցնեն իրենց հայկականութիւնը, կը ձգենք պատմաբաններու. բայց ո՞ւր է առողջ հայ ընտանիքը »թէ մօրդ անգամ մտքից հանես, քո մայր լեզուն չմոռանաս«:

Շատ են մեղադրանքի թելերը, բայց կայ ու կը մնայ թոյնին ակը, ինք՝ հայ ծնողքը. շատ ու շատ մեծ է դերը հայ ծնողքին: Ինքնազարգացումի ճամբով ծնողք-զաւակ յարաբերութիւնը կրնայ դառնալ հայ լեզուի ուսուցումի ճամբայ, դժուարին բայց արդիւնաբեր գործ, որ կրնայ նախընծան ըլլալ առողջ հայ ընտանիքի ու հայ անհատի կերտումին: Շրջանակը ինքնին կրնայ ըլլալ բալասան ու կամ խորտակիչ նետ ու զգետնել հայ լեզուն ու մշակոյթը: Այո, դիւրին չէ, ամէն կողմ ամէն շրջան գտնել հայկական շրջանակ, առողջ շրջանակ. շատ ու շատ են անձնական պատճառները, հեռու են այդ խիտ հայկական շրջանակներէն, բայց ունինք լրատուական ու հաղորդակցութեան միջոցներ թերթ, պարբերաթերթ, ձայներիզներ, տեսաներիզներ ու չնչին ժամանակի զոհողութեամբ, կամքով օրինուած հայ ծնողքը իր զաւակներուն կրնայ հայ մշակոյթ ու լեզու փոխանցել: Հաւանաբար շատ մեծ է դերը հայ գա-

⇨12

⇦11 ղութիւն. խօսքս կ'երթայ մեծաթիւ գաղութներու պատասխանատուներուն, եկեղեցի, դպրոց, ակումբ, հայ պատանի-պարմանուհիներու փոխանցելու հարուստ հայ մշակոյթի ոսկեզօծ գանձը ի գիր ամէն զոհողութեան, թիկունք կանգնելով հայ արուեստագէտներու ու կրթական գործիչներու, որ փոխան հանապազօրեայ հացի վազվզուքի ստեղծագործեն ու կրթութիւն ջամբեն:

Դժուարին ու հսկայ աշխատանք, բայց վստահ ենք որ խաժ առաւօտը պիտի ծագի Սփիւռքի կոտտացող եղերամայր հորիզոնին՝

մինչ այդ յուսամ, ճէյսօն ու իր նմաններ իրենց խոստումը յարգեն ու հայ լեզուն կենդանի շարունակէ իր դարաւոր երթը դէպի...❑

ՇԱՆԹ ՂԱԶԱՐԵԱՆ

⇦8 Հայրենիքի գերագոյն մարմինը կը վերահսկէ խորհրդարանական ֆրակցիայի աշխատանքները:

Գալով ժամանակի ընթացքին տեղի ունեցած կարգ մը կառուցային փոփոխութիւններուն մասին՝

1892-ին Ա. ընդհանուր ժողովին կ'որդեգրուէր «ապակեդրոնացեալ» դրութիւնը. ընդհանուր ժողովին կողմէ կ'ընտրուէր երկու բիւրօ, մին՝ արեւելեան, միւսը՝ Թաւրիզի (Պարսկաստան) բիւրօ:

1895/98-ի տարիներուն արեւելեան Բիւրոյի հրաւէրով կը գումարուէին արեւելեան շրջանի պատգամաւորական ժողովներ, որոնք կուսակցական բարձրագոյն աստիճանի համախմբումներ էին: Այս ժողովները յաճախ նորութիւններ կամ փոփոխութիւններ բերած են: Սկիզբը այս ժողովները կոչուեցան տարեկան ընդհանուր ժողովներ, ապա Ռայոնական (կիսա-շրջանային) ժողովներ:

1896/97-ի Ռայոնական ժողովը կ'որոշէր «պարսկաստանի» Բիւրօն վերածել ինքնուրոյն շրջանի փոխարէնը կազմեց «Դրօշակ»ի խմբագրական կազմը, որ նոյն ժամանակ կուսակցութեան արտասահմանի բիւրոն էր: Յետագային այս բիւրոն պաշտօնականութիւն պիտի ըստանար Հ.Յ.Դ. Բ. ընդհանուր ժողովին կողմէ:

1898-ի Բ. ժողովը կ'որոշէր յառաջացնել մարմին մը որ պիտի կոչուէր Հ.Յ.Դ.-ի «կամքը ներկայացնող մարմին», որ կը կազմուէր օրին գոյութիւն ունեցող երկու Բիւրոներու եւ չորս կեդրոնական կոմիտէներու ներկայացուցիչներէն: Այս մարմինը օժտուած էր ընդհանուր ժողովի իրաւասութիւններով, բացի ծրագրային եւ կազմակերպական կառոյց փոխելու իրաւասութիւններէն:

1907-ի Դ. ընդհանուր ժողովը կ'որոշէր յառաջացնել երկրի պատասխանատու մարմին մը որու գործը պիտի ըլլար ղեկավարել արեւմտեան հայաստանի յեղափոխական գործունէութիւնը, ինչպէս նաեւ ցուցական մարմին մը, որ Պոլիսի մէջ քարոզչական ու զինուորական գործունէութիւններ պիտի տանէր:

1913-ին, նկատի առնելով տիրող քաղաքական պայմանները, է. ընդհանուր ժողովը կ'որոշէր յառաջացնել երրորդ Բիւրօ մը որ պիտի կոչուէր «երկրի Բիւրօն», սակայն մէկ տարի վերջ Ը. ընդհանուր ժողովը վերատեսութեան ենթարկելով նախորդ ընհանուր ժողովին վերոյիշեալ որոշումը, կ'որոշէր չնչել արեւմտեան բիւրօն եւ անոր իրաւասութեան շրջանները միացնել երկրի բիւրօին:

1919-ի թ. պատմական ընդհանուր ժողովը, դժբախտաբար մինչեւ օրս կը մնայ միակ ընդհանուր ժողովը որ գումարուած է ազատ ու անկախ մայր հայրենիքին մէջ:

Իբրեւ պետութեան մը մէջ գործող կուսակցութիւն, Հ.Յ.Դ-ը կու գար նախ յառաջացնելու իր խորհրդարանական ֆրակցիան, որ կը գործէր կուսակցութեան գերագոյն, ռայոնական եւ կոնֆերանս ժողովներու որոշումներով: Իսկ կոնֆերանս կոչուած ժողովը, կը գումարուի Բիւրոյի 2/3 ի եւ կեդրոնական կոմիտէներէն երեքին պահանջով: Այս խորհրդաժողովին կը մասնակցին Բիւրոն լրիւ կազմով, խորհրդարանական ֆրակցիան եւ կ. կոմիտէութիւնները մէկական ներկայացուցիչներով: Այս ժողովը ընդհանուր ժողովին կողմէ չնախատեսուած հարցերու մասին որոշումներ առնելու իրաւասութիւնը ունի ու անոր որոշումները պարտադիր են թէ Բիւրոյին եւ թէ մնացեալ մարմիններուն:

Մինչեւ օրս կուսակցութիւնը իր կազմակերպական կառոյցը գրեթէ անփոփոխ կը պահէ, սակայն նկատի արած անկախ հայրենիքի գործունէութեան պահանջքները եւ առանց մոռնալու երկրի սահմանադրութեան դրած արգելքները, 26-րդ ընդհանուր ժողովը կ'որոշէր յառաջացնել երկրի գերագոյն մարմին մը, որուն իրաւասութիւններուն մասին խոսեցանք արդէն:

Վերջապէս, Հ.Յ.Դ-ը ունեցած է կարգ մը պատասխանատու մարմիններ ու մասնագիտական յանձնախումբեր, ինչպէս հայ դատի յանձնախումբեր, մամլոյ դիւան, դատական ատեան, եւայլն: ❑

Շանթ ժամկոչեան
«Բեկոր Աշոտ» մասնաճիւղ

Թորոնթոյի համալսարանի ASA-ը

1995 Յունուարէն սկսեալ, Armenian Students' Association at the University of Toronto-ը, (Թորոնթոյի համալսարանի հայ ուսանողական միութիւն -ԹՀՀՈՄ) վերաշխուժացած է: Նախապէս ճանչցուած որպէս բաւական մտաւորական միութիւն մը, ԹՀՀՈՄ-ը այս տարի կը մտադրէ զարկ տալ ընկերային ձեռնարկներու, հաւաքոյթներու, getaway-ներու, եւայլն.... Այսպէս, ԹՀՀՈՄ-ի յառաջաբանը կը թուի ըլլալ "Study hard, have fun harder":

Հիմնուած 1966-ին, ԹՀՀՈՄ-ը այս տարի պիտի տօնէ իր 30-րդ տարեդարձը: Այժմու կանոնագիրը 1988-ին գրուած, բարեփոխուած է 1995-ին, Student Administrative Council-ին (SAC) եւ Թորոնթոյի համալսարանին օրէնքներուն պատշաճ ըլլալու համար:

Ըստ ASA-ի տեղեկագրին, միութիւնը ունի 110 անդամներ, որոնցմէ 40-ը՝ աշխոյժ: Հետաքրքրական է, թէ ուրիշ հայ ուսանողական միութիւններէ տարբերելով, ԹՀՀՈՄ-ը ունի դասախօսական կազմերէ բազմաթիւ անդամներ: Պէտք է յիշել սակայն, որ ASA-ին կ'անդամակցին նաեւ Թորոնթոյի համալսարանին հետ անմիջական կապ չունեցող հայազգիներ:

ASA-ը կը դիմագրաւէ բազմաթիւ դժուարութիւններ: Գրասենեակի պակասը, համալսարանի մեծութիւնն ու 3 տարբեր մասերու բաժնուած ըլլալը: Հայահոծ շրջաններէ հեռու ըլլալն ու համալսարանի կարգ մը խիստ օրէնքները, ինչ կը վերաբերի նիւթական օգնութեան, սենեակներ ապահովելուն, եւայլն...

Հակառակ այս բոլոր դժուարութիւններուն, ASA-ը կը թուի բաւական աշխոյժ ըլլալ: Նախորդ տարեշրջանէն, անկարելի է մոռնալ հռչակաւոր "Navag 9T5 Boat Cruise"-ը:

Այս տարուան զանազան ձեռնարկներէն յիշենք Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանին, Գառնիկ Նանագուլեանի դասախօսութիւնը՝ "Armenia and its position in the World": Չմոռնանք Bowling Nite-ը, Armenian Gladiators խաղը եւ միութեան մասնակցութիւնը University of Toronto Carnival-ին, ինչպէս նաեւ SAC-ի "Club Days"-ին:

Աւելին, ASA-ը այս տարի սկսաւ »ցանցին վրայ սահիլ« (Surf on the net), ունենալով իրեն յատուկ email-ի հասցէն եւ Webpage-ը որոնք են.

asa@ campuslife.utoronto.ca

http: //www.campuslife.utoronto.ca/groups/asa.html

